

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-26/12**

ք. Երևան

«31» հուլիս 2026թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս՝ գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էլ Թի Մոտորս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գործադիր տնօրեն Լևոն Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը չի կարող գերազանցել 211 500 (երկու հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը,

պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն

կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 46 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ արդարադատության
նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011018547
ՀՎՀՀ՝ 02506264



Լ. Հաչատրյան
/ստորագրություն/


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Էլ Թի Մոտորս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մարգարյան 29/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570065411040100
ՀՎՀՀ 01301624
Հեռ. /055/226666



Լ. Խաչատրյան
/ստորագրություն/


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գին /ՀՀ դրամ	մատուցման	
					հասցեն	ժամկետը
1	50111130/2	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /1 ավտոմեքենա/	դրամ	211 500	1	ՀՀ, ք. Երևան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 28.12.2026թ.

Հավելված 11

Հ/հ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	5 տեղանոց մարդատար առջևի տանող Տոյոտա Բենդի, 2ադժիչը՝ 2.5լ, ավտոմատ փ/տ, 2015թ.	Հավելված
SU-1 ներառող ծառայությունների անվանումը			
1	Բռնկման համակարգի ստուգում	4000	
2	ԱՓՏ և աշխատանքի ստուգում	3500	
3	ՓՏ աշխատանքների ստուգում		
4	ABS համակարգի ստուգում	3500	

5	Յուղման համակարգի ստուգում	3000
6	Կցորդման համակարգի ստուգում	
7	Շարժիչի ստուգում	5000
8	Կարողանային փոխանցման աշխատանքի ստուգում	
9	Առջևի կախոցների ստուգում	4000
10	Հետևի կախոցների ստուգում	4000
11	Ղեկային մեխանիզմի ստուգում	3500
12	Թափքի վիճակի ստուգում	2000
13	Արգելական համակարգի ստուգում	3000
14	Ավտոմեքենայի սրահի ստուգում	3500
15	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	4000
16	Սառեցման համակարգի ստուգում	3500
17	Արտաձման համակարգի ստուգում	3500
18	Բաշխիչ տուփի համակարգի ստուգում	
19	Առջևի կամրջակների ստուգում	
20	Հետևի կամրջակների ստուգում	
21	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	3000
22	Յուղման համակարգի ստուգում	3500
23	Ղեկավարման համակարգի ստուգում	3500
24	Սնման համակարգի աշխատանքի ստուգում	3500
	SU-2 ներառող ծառայությունների անվանումը	5 տեղանոց մարդատար առջևի տանող Տոյոտա Քեմրի, շարժիչ՝ 2.4լ, ավտոմատ փ/տ, 2015թ
1.Շարժիչ		
25	Շարժիչի հանում, փոխարինում և տեղադրում	75000

26	շարժիչի բլրկի գլխիկի հանում և տեղադրում	67000
27	Շարժիչի քանդում, արատավորում, փոխարինում և հավաքում	140000
28	Շարժիչի գլխիկի հանում, տեղադրում՝ միջադիրի փոխարինումով	74000
29	Շարժիչի գլխիկի կափարիչի միջադիրի փոխարինում	18000
30	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հոկումով	55000
31	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հոկումով	57000
32	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	9000
33	Վառոցքի մոմի ծայրակալի փոխարինում	8000
34	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	44000
35	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	34000
36	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	19000
37	Շարժիչի մխցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	140000
38	Ծնկաձև լիսեռի հոկում	30000
39	Ծնկաձև լիսեռի փոխարինում	94000
40	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	87000
41	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	110000
42	Ծնկաձև լիսեռի ուղղում	60000
43	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	12500
44	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	45000
45	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	60000
46	Շարժիչի բլրկի փոխարինում	140000
47	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	44000

48	Շարժիչի բլոկի հոկում		40000
49	Մխոցի փոխարինում 1 հատ		94000
50	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում		40000
51	Բաշխիչ լիսեռի ականջների հանում և տեղադրում կամ փոխարինում		185000
52	Բաշխիչ լիսեռի խցուկների փոխարինում		27500
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
53	Ավտոմեքենայի յուղում		4500
54	Համակարգչային ախտորոշում՝ թերությունների վերացմամբ		6000
55	Ցուղի ռադիատորի փոխարինում		14000
56	Ցուղի ռադիատորի նորոգում		15000
57	Ցուղի պոմպի փոխարինում		27500
58	Ցուղի զսիչի փականի փոխարինում		8000
59	Արտաձման կոլեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում		19000
60	Ներաձման կոլեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում		20000
61	Արտաձման կոլեկտորի միջադիրի փոխարինում		21000
62	Ներաձման կոլեկտորի միջադիրի փոխարինում		21000
63	Վառելիքի փողոսակի փոխարինում		8000
64	Խառնարակի փոխարինում		
65	Ցուղի փողոսակի փոխարինում		7500
66	Վառոցքի մոմի խտարարի փոխարինում		9000
67	Մարման ընթացքի կարգավորիչի փոխարինում		8000
68	Վառոցքի մոմի փոխարինում		14000

69	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	10000
70	Վառելանյութի գտիչի փոխարինում	10000
71	Սրահի օդի գտիչի փոխարինում	2500
72	Պատյանի օդի գտիչի փոխարինում	3000
73	Օդի գտիչի փոխարինում	1750
74	Կոնդիցիոների գտիչի փոխարինում	3000
75	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6400
76	Օդի ծախսաչափիչի փողոսկի հանում և տեղադրում	3400
77	Օդի գտիչի փողոսկի հանում և տեղադրում	3400
78	Օդաքաշի փողոսկի հանում և տեղադրում	3400
79	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	40000
80	Ինժեկտորի բոցամուղների փոխարինում 1 կ-տ	18500
81	Ինժեկտորի բոցամուղների մաքրում	21000
82	Բոցամուղի կողավորում	12500
83	Ինժեկտորի բոցամուղի խցուկների փոխարինում	15000
84	Բենզամղիչի փոխարինում	11000
85	Վառելիքի կոշտ մաքրման գտիչի փոխարինում	10000
86	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9000
87	Բռնկման կարգավորում	4500
88	CO կարգավորում	4500
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	19000
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում	64000

91	Ղեկավարման համակարգիչի փոխարինում	22500
92	Ղեկավարման համակարգիչի վերանորոգում	80000
93	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000
94	Վառելիքի բաքի մաքրում	10000
95	Արագարարի ոտնակի փոխարինում	6700
96	Արագարարի ճուպանի փոխարինում	5000
97	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	7400
98	Օդի ծախսի տվիչի փոխարինում	5000
99	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	6700
100	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	5000
101	Բենզոլրաքի բենզոմոլիչի ցանցի փոխարինում	10000
102	Բենզոլրաքի բենզոմոլիչի ցանցի մաքրում	6700
103	Ցուղի ճնշման տվիչի փոխարինում	8400
104	Տվիչի փոխարինում	3500
3. Սառեցման և արտաձման համակարգ		
105	Հովիարի փոխարինում	16000
106	Հովիարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000
107	Հովիարի պալայանի փոխարինում	12000
108	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	15400
109	Ռադիատորի շրջանակի փոխարինում	10000
110	Շերտափեղկի փոխարինում	18000
111	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	10000
112	Ռադիատորի կալունակի փոխարինում	7500

113	Ռադիատորի փողոցակի փոխարինում	15000
114	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	18400
115	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	12500
116	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	10000
117	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	15000
118	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	30000
119	Կոնդիցիոների փոկի փոխարինում	7000
120	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	25000
121	Ընդարձակող բաքի փոխարինում	4000
122	Ընդարձակող բաքի փողոցակի փոխարինում	2700
123	Ընդարձակող բաքի փականի փոխարինում	1250
124	Ջրի ծորակի փոխարինում	5000
125	Ջրի պոմպի խցուկի փոխարինում	5000
126	Ջրի պոմպի առանցքակալի փոխարինում	5000
127	Ծորակի փոխարինում	10000
128	Ջրի պոմպի թևակի փոխարինում	9000
129	Սառնարանի փոխարինում	10000
130	Կրոշտեյնի փոխարինում	2000
131	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	10000
132	Արագագործ կցորդ	1200
133	Հովացման համակարգի ռետինե փողոցակի փոխարինում	4000

4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ

134 Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում

135	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	
136	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	
137	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	
138	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	
139	ՓՏ կափարիչի փոխարինում	
140	ԱՓՏ-ի կափարիչի փոխարինում	18,000
141	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	
142	Կցորդման երկժանիքի փոխարինում	
143	ՓՏ-ի հիմնական նորոգում՝ ներառյալ բոլոր աշխատանքները	
144	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	
145	ՓՏ-ի փոխարինում	
146	ՓՏ-ի առջևի խցովների փոխարինում	
147	ՓՏ-ի հետևի խցովների փոխարինում	
148	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	
149	ՓՏ-ի հանում, տեղադրում կամ փոխարինում	
150	ԱՓՏ-ի հանում, տեղադրում կամ փոխարինում	50,000
151	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	
152	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	
153	ԱՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	60,000
154	ՓՏ-ի փոխանցման փոշեթիկնոցի փոխարինում	
155	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	
156	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	
157	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	

158	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում		
159	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում		
160	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում		
161	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում		
162	ՓՏ-ի բարձրիկի փոխարինում		
163	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում		
164	ՓՏ-ի յուղի փոխարինում		
165	ՓՏ-ի ուղղորդիչի վռանի փոխարինում		
166	Մուֆտի փոխարինում	42000	
167	Վազքաչափիչի շարժաբեղի փոխարինում	9500	
168	ԱՓՏ-ի հիմնական նորոգում՝ ներառյալ բոլոր աշխատանքները	299000	
169	ԱՓՏ-ի աստամանիկի փոխարինում	30000	
170	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	70000	
171	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	50000	
172	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում	10000	
173	ԱՓՏ-ի սղենդրների փոխարինում	60000	
174	ԱՓՏ-ի համակարգչի և սղենդրների փոխարինում	110000	
175	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	50000	
176	ԱՓՏ-ի յուղի մղիչի խցուկների փոխարինում	10000	
177	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	7500	
178	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	17500	
179	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում	20000	
180	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	18000	

181	ԱՓՏ-ի յուրի փոխարինում	16500
182	ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում՝ կարտերի հանում և տեղադրումով	17000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
183	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում՝ ներառյալ բոլոր աշխատանքները	
184	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	
185	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	
186	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	
187	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	
188	Բաշխիչ տուփի դիֆրագմանների փոխարինում	
189	Բաշխիչ տուփի շարժաբերի փոխարինում	
190	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	
191	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	
192	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	
193	Բաշխիչ տուփի երկրժանիի փոխարինում	
194	Բաշխիչ տուփի բարձրիկի փոխարինում	
195	Բաշխիչ տուփի խցուկ փոխարինում	
196	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	
197	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	
198	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	
199	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	
200	Տվիչի փոխարինում	
201	Բաշխիչ լիսեռի աստամանիկի փոխարինում	
202	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	

203	Բաշխիչ տուփի շրջափի փոխարինում	6. Առջևի և հետևի կամրջակներ	
204	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում		80,000
205	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում		80,000
206	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում		20,000
207	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում		20,000
208	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խցուկների փոխարինում		20,000
209	Կամրջակի յուղի փոխարինում		50,000
210	Առջևի կամրջակի բռնցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում		10,000
211	Առջևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում		
212	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում		5,000
213	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում		35,000
214	Կիսաստնու միջադիրի փոխարինում		10,000
215	Կարգավորիչի տափօղակի փոխարինում		10,000
216	Դիֆֆերենցիալի առանցքակալի փոխարինում		10,000
217	Դիֆֆերենցիալ սատելիտի փոխարինում		30,000
218	Դիֆֆերենցիալ գնդի փոխարինում		30,000
219	Սատելիտների պատյանի փոխարինում		30,000
220	Տանող աստամանիկի խցուկի փոխարինում		30,000
221	Տանող աստամանիկի առանցքակալի փոխարինում		30,000
222	Ռեզոնատորի փոխարինում		30,000
223	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում		

224	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	
225	Հետևի կամրջակի մասնակի քանդում, արատավորում և հավաքում	
226	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	
227	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	
228	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խցուկի փոխարինում	
229	ռեդուկտորի փոխարինում	40,000
230	Հետևի կամրջակի բռնցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	
231	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	
232	Հետևի կամրջակի բլրկավորման համակարգի նորոգում	
233	Կամրջակի տվիչի փոխարինում	
234	Կամրջակի իրանի փոխարինում (չուլով)	
235	Կամրջակի յուղի փոխարինում	
7. Կախոց		
236	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	34000
237	Տրավերսի բարձիկի փոխարինում	21000
238	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	12000
239	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	11000
240	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	11000
241	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	11000
242	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	11000
243	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում ա/մ-երի համար	11000
244	Անվակունդի գամասեղի և Հեղույսի փոխարինում(մեկ անիվի համար)	4900
245	Ձախ կամ աջ հողակապի խցուկ փոխարինում	6000

246	Տնցամեղիչի թասակի փոխարինում	9500
247	Առջևի ցնցամեղիչի փոշեթիկնոցի փոխարինում	7250
